4

Հաստատված է ՀԽՍՀ ժողկրթության
մինիստրության կոլեգիայի
14.07.89թ. հ.12 նիստում

Դ Ր Ո Ի Ց թ

ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության հանրակրթական փորձառական գիտաարտադրական համալիրի աշխատանքի կազմակերպման մասին

1. ՀԱՄԱԼԻՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1.Անձի ներդաշնակ ու համակողմանի զարգացման համար անհրաժեշտ հոգեբանական - մանկավարժական իրական նախապայմանների ստեղծում.

1.2.Երեխայի արդի և ապագա կենսահարմարման նախադրյալների ստեղծում և կարողությունների ձևավորում:

1.3.Նախադպրոցական,հանրակրթական և մանկական մասնագիտական կրթօջախների կառուցվածքաբովանդակային միասնականացում և դրանց ջանքերի համախմբում կրթական միասնական խնդիրների իրականացման նպատակով.

1.4. Մանկավարժական գիտության ու պրակտիկայի սերտ փոխհամագործակցությանն ու փոխհաստատմանն ուղղված բովանդակային-կառուցվածքային որակապես նոր համակարգ փորձարկում.

1.5. Ինտումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման որակապես նոր ձևերի ու մեթոդների մշակում ու ներդրում.

1.6. Մանկավարժական առաջավոր փորձի կուտակում,ամփոփում ու վերիմաստավորում; ինչպես նաև կուտակված նորարարական մանկավարժական փորձի ներդրում.

1.7. Մանկավարժների որակավորման ու անընդհատ կրթության կազմակերպում կրթօջախ-լաբորատորիայի պայմաններում:

2. ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համալիրը կառուցվածքային միավորների իրավունքով ներառում է.

1. Երևանի նախակրթարանը
2. միջին դպրոցը
3. ավագ դպրոցը /1,2,3-ը ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության

նախկին Երևանի Հ.183 միջնակարգ փորձառական դպրոցի հիման վրա/:

4. Մանկավարժական գիտահետազոտական լաբորատորիան

5. ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության Երևանի Հ.119 մանկապարտեզը

6. Երեխաների գեղարվեստական և տեխնիկական ստեղծագործության դպրոցը

7. Երաժշտական կրթության մանկական դպրոցը

8. Մանկապատանեկան մարզադպրոցը

9. Հոգեբանական ծառայությունը

10. ,,Մանչուկ,, աշակերտական գործարանը, օժանդակ գյուղական տնտեսությունը և խոհանոց-կոմբինատը /արտադրական բազա/

11. ,,Դպրոց բնության գրկում,, օջախը

12. Աշտարակ քաղաքի նորաստեղծ Հ.7 հանրակրթական դպրոցը:

3. ԿՐԹՕՋԱԽԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Երևանի նախակրթարան: Միջին դպրոց: Ավագ դպրոց: Աշտարակի Հ.7 հանրակրթական դպրոց:

Դպրոցների կրթության /ուսուցման ու դաստիարակության/ բովանդակությունը և կազմակերպման ձևը որոշում է համալիրի խորհուրդը՝ մանկավարժական գիտահետազոտական լաբորատորիայի մշակած ուսումնական պլանի, ծրագրերի, մեթոդների և փորձնական ձեռնարկների հիման վրա: Դպրոցները ապահովում են դպրոցականների ուսուցմանն ու դաստիարակությանը ներկայացվող պայմանները՝ պետական միասնական չափանիշներով:

Դպրոցների կառավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է: Դպրոցի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է դպրոցի տնօրենը:

Համալիրի հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական գործունեության կազմակերպումը, ուսումնական առարկաների սպասարկումը դրվում է հարակից առարկաների ուսուցիչների միավորումների՝ ամբիոնների վրա: Ամբիոնի գործունեությունը ղեկավարում է վարիչը՝ տվյալ առարկայի առաջատար ուսուցիչը:

Մանկավարժական գիտահետազոտական լաբորատորիա

Գիտահետազոտական լաբորատորիայի կազմում գործում են մշտական և ժամանակավոր գիտական խմբեր, որոնք ստեղծվում են որոշակի ժամկետում կոնկրետ խնդիր լուծելու սկզբունքով: Համալիրի խորհուրդը յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսին ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության մանկավարժական նորարա-

ության պետական- հասարակական խորհրդին է ներկայացնում հաջորդ տարվա գիտահետազոտական աշխատանքների թեմաները, դրանց իրագործման ժամկետները, աշխատավարձի ֆոնդը և այլ ծախսերի նախահաշիվը: ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության մանկավարժական նորարարության խորհրդի և համալիրի տնօրինության փոխհամաձայնությամբ ստեղծված պետական-հասարակական մասնագիտական խմբերի կողմից ընդունվելուց հետո դրանք ստանում են պայմանագրի ուժ: Համալիրի խորհուրդը իրավունք ունի լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքների պայմանագրային տարեկան գումարի 30 տոկոսի սահմանում ինքնուրույն որոշել հետազոտական աշխատանքների թեմաները: Յուրաքանչյուր գիտահետազոտական թեմայի ընդունումը կատարվում է պետական-հասարակական փորձագիտական խմբի կողմից:

Գիտահետազոտական լաբորատորիան իրավունք ունի պայմանագրային կարգով գիտական աշխատանք կատարել մանկավարժական բուհերի և ժողկրթության համակարգի այլ կազմակերպությունների համար:

Գիտահետազոտական առանձին թեմաներ կարող են մշակվել մանկավարժական և այլ բուհերի համապատասխան ամբիոնների, գիտությունների ակադեմիայի և այլ ինստիտուտների աշխատակիցների մասնակցությամբ: ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության և շրջժողկրթբաժինների հետ համալիրը կարող է կնքել պայմանագրեր ուսուցիչների որակավորման և անընդհատ կրթության գործը իր շրջանակներում կազմակերպելու համար:

Լաբորատորիան ղեկավարում է վարիչը՝ համալիրի փոխտնօրենը գիտահետազոտական աշխատանքների գծով: Լաբորատորիայի ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է:

Հ. 119 մանկապարտեզ

Հ.119 մանկապարտեզը գործում է որպես փորձնական մանկապարտեզ: Համալիրի գիտահետազոտական լաբորատորիայի և մանկապարտեզի աշխատախմբի կողմից մշակվում և իրականացվում են մանուկների դաստիարակության և ուսուցման նոր՝ ազգային նկարագրով ծրագրեր:

Մանկապարտեզի գործունեությունը ղեկավարում է վարիչը՝ համալիրի փոխտնօրենը նախադպրոցական դաստիարակության գծով: Մանկապարտեզի ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է, որի կազմում ընդգրկվում

են նաև մանկապարտեզին աջակցող մասնագիտական խմբերի, հիմնարկների և ծնողների ներկայացուցիչները:

Երեխաների գեղարվեստական և տեխնիկական ստեղծագործության դպրոց

Գործում է որպես երեխաների տեխնիկական և գեղարվեստական ստեղծագործության փորձառական դպրոց՝ ղեկավարվելով փորձառական դպրոցի մասին կանոնադրությամբ: Դպրոցը համալիրի գիտահետազոտական լաբորատորիայի հետ մշակում և իրագործում է նաև համալիրի դպրոցների ու մանկապարտեզի ծեռարվեստի /կերպարվեստ՝ աշխատանքի ուսուցում, կիրառական արվեստ/ և թատրոնի ծրագրերը: Փորձարկվում են գիտահետազոտական լաբորատորիայի կողմից մշակվող հանրակրթական գեղարվեստական դաստիարակության նոր ծրագրերը:

Դպրոցը կազմակերպում է ծնողների գեղարվեստական և տեխնիկական լուսավորության գործը: Գեղարվեստական և տեխնիկական դպրոցի գործունեությունը ղեկավարում է վարիչը՝ համալիրի փոխտնօրենը գեղարվեստական և տեխնիկական կրթության գծով: Դպրոցի ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է:

Երաժշտական կրթության մանկական դպրոց

Գործում է որպես փորձառական երաժշտական դպրոց՝ ղեկավարվելով փորձառական դպրոցի մասին կանոնադրությամբ: Երաժշտական դպրոցը կրթօջախի գիտահետազոտական լաբորատորիայի հետ մշակում և իրագործում է նաև հանրակրթական դպրոցների և մանկապարտեզի նոր՝ ազգային երաժշտական կրթության ծրագրերը: Փորձարկվում են գիտահետազոտական լաբորատորիայի մշակած ազգային երաժշտական մասնագիտական կրթության նոր ծրագրերը: Դպրոցը կազմակերպում է ծնողների երաժշտական լուսավորության գործը:

Երաժշտական դպրոցի գործունեությունը ղեկավարում է վարիչը՝ կրթօջախի փոխտնօրենը երաժշտական կրթության գծով: Երաժշտական դպրոցի ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է:

Մանկապատանեկան մարզադպրոց

Գործում է որպես մանկապատանեկան փորձառական մարզադպրոց՝ ղեկավարվելով փորձառական մարզադպրոցի մասին կանոնադրությամբ:

Մարզադպրոցը համալիրի գիտահետազոտական լաբորատորիայի հետ մշակում և

իրագործում է նաև համալիրի դպրոցների և Հ.119 մանկապարտեզի ֆիզդաստիարակության նոր ծրագրեր, մանուկների շրջանում արմատավորում մանկական ավանդական շարժուն խաղերի համալիր: Մարզադպրոցի կազմում գործում է մարզաշավային վարժութային-հրահանգչական կենտրոնը: Մարզադպրոցը կազմակերպում է ծնողների ֆիզդաստիարակչական լուսավորության գործը:

Մարզադպրոցի գործունեությունը ղեկավարում է վարիչը՝ համալիրի փոխտնօրենը ֆիզդաստիարակության գծով: Մարզադպրոցի ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է:

Հոգեբանական ծառայություն

Կրթօջախի հոգեբանական ծառայությունը սպասարկում է համալիրի կառուցվածքային միավորներին: Համալիրի կառուցվածքային միավորների, համալիրի խորհրդի պատվերներից և հոգեբանական ծառայության սեփական առաջարկներից գոյանում է ծառայության աշխատանքների տարեկան ծավալը, որը հաստատվում է համալիրի խորհրդի կողմից: Ծառայության կատարած պատվերի գնահատականը տալիս է պատվիրատուն: Ծառայությունը կարող է մասնակցել նաև համալիրի լաբորատորիայի գիտահետազոտական թեմաների մշակմանը, ինչպես նաև, տարվա համար նախատեսված աշխատանքներից դուրս, պայմանագրային կարգով, կատարել ինքնուրույն հետազոտական աշխատանք ժողկրթության համակարգում: Հոգեբանական ծառայության հաստիքացուցակը համալիրի տնօրենի ներկայացմամբ յուրաքանչյուր տարվա համար հաստատվում է ժողկրթության մինիստրության կողմից: Հոգեբանական ծառայությանը կից գործում է մանկական ավանդական խաղերի հավաքման ու տարածման կենտրոն՝ իր վարժութային-հրահանգչական խաղադարանով: Հոգեբանական ծառայության ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է: Խորհուրդը պարբերաբար փորձագիտական եզրակացության է ուղարկում ծառայության առանձին պատվերների կատարումը:

Արտադրական բազա

,,Մանչուկ,, աշակերտական գործարանը ղեկավարվում է միջդպրոցական արհեստանոցների մասին ԹՍՀՄ ժողկրթության պետական կոմիտեի հաստատած կանոնադրությամբ: Գործարանի տարեկան պատվերները գոյանում են համալիրի կառուցվածքային միավորների և ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության առաջադրանքներից: Պատվերների տարեկան ծավալի 25 տոկոսի չափով գործարանը ազատ է ինքնուրույն մտահղացումների իրականացման գործում: Գործարանի արտադրանքը բացառապես

ուղղվում է ժողովրդական կրթության կենսական կարիքների բավարարմանը:

Օժանդակ գյուղական տնտեսությունը առաջնորդվում է ԽՍՀՄ ժողկրթության պետական կոմիտեի կողմից հաստատված դրույթով: Գյուղական տնտեսության ծավալման նպատակով համալիրը կարող է իր հաշվեկշռում ունենալ նաև գյուղ:

Արտադրական բազայի կազմում կարող են գործել ուսուցչական-աշակերտական կոոպերատիվների վճարովի ծառայություններ: Արտադրական բազան ղեկավարում է համալիրի փոխտնօրենը արտադրական գծով: Արտադրական բազայի ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է; [illegible]

[illegible]:

,,Պլրոց բնության գրկում,, օջախը

Բնության հետ երեխաների ներդաշնակ կապի, նրանց էկոլոգիական կրթության և հանգստի արդյունավետ կազմակերպման նպատակով կրթօջախը ուս. տարվա ընթացքում կազմակերպում է ,,Պլրոց բնության գրկում,, ստացիոնար օջախը: Որոշակի աշխատակարգով հարակից դասարանների երեխաների մեծ խմբի դասերը 10-15 օրով կազմակերպվում են այդ օջախում: ՀԽՍՀ ժողկրթության մինիստրությունը այդ օջախի կազմակերպման համար տրամադրում է որևէ նստարան կամ հանգստյան տուն: Համալիրը կարող է այդ աշխատանքները ծավալել իրեն պատկանող գյուղում: Օջախի պահման ծախսերը կատարվում է մասամբ համալիրի, մասամբ՝ ժողկրթության աշխատողների հանրապետական կոմիտեի, մասամբ՝ ծնողական մուծումների հաշվին: Օջախը ղեկավարում է արտաուսումնական աշխատանքների գծով համալիրի փոխտնօրենը:

4. ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Համալիրը հաստատվում է ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության հանրապետական ենթակայության փորձառական հիմնարկ:

4.2. Համալիրը հաստատվում է Երևանի մանկավարժական ինստիտուտների և Երևանի պետական համալսարանի հենակետային կրթօջախ: Համագործակցությունը համալսարանի և ինստիտուտների հետ տարվում է համաձայն տարեկան պայմանագրի, որը վավերացվում է բուհերի ռեկտորների և համալիրի տնօրենի կողմից:

4.3. Համալիրը իր աշխատանքներում ղեկավարվում է ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական կրթության օրենսդրության հիմունքներով, միջնակարգ փորձառական դպրոցի, մանկական նախադպրոցական հիմնարկի, մասնագիտական կրթության մանկական օջախների, դպրոցական ուսումնաարտադրական արհեստանոցների, օժանդակ գյուղական տնտեսության, դպրոցական հոգեբանական ծառայության, մանկավարժական գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին կանոնադրություններով, սույն կանոնադրությամբ և սոցձեռնարկության մասին օրենքով:

4.4. Կրթօջախի, նրա տարածքի կահավորումը իրականացվում է համալիրի կառուցվածքային միավորների կահավորման և պահպանման սանիտարական կանոններին համապատասխան:

4.5. Համալիրի վերադաս օրգանը ՀԽՍՀ ժողկրթության մինիստրությունն է: Նրա գիտական, ուսումնամեթոդական գործունեությունը վերահսկում է ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության մանկավարժական նորարարության հասարակական պետական խորհուրդը:

4.6. Համալիրի երեխաների առողջական վիճակի, բուժական պրոֆիլակտիկան և առողջարարական միջոցառումները իրականացնում է համալիրի բժշկական ծառայությունը: Դրանց նկատմամբ հսկողությունը որոշվում է ԽՍՀՄ և ՀԽՍՀ առողջապահության մինիստրությունների համապատասխան հրահանգներով:

4.7. Համալիրի երեխաների սնունդը կազմակերպվում է համալիրի արտադրական բազայի կազմում գործող խոհանոց-կոմբինատի կողմից՝ հաստատված նորմերի համաձայն:

4.8. Համալիրը ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության նյութատեխնիկական մատակարարման վարչության կողմից նյութատեխնիկական ապահովման առաջնահերթ իրավունք ունի:

5 ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ: ԿՐԹՕՋԱԽԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

5.1. Համալիրի գործունեության ղեկավարման բարձրագույն օրգանը համալիրի խորհուրդն է, որն ընդգրկում է համալիրի մանկավարժներին, երեխաներին, ծնողներին և հասարակական այլ խավերի ներկայացուցիչներին: Նրա գործունեությունը որոշվում է խորհրդի մասին կանոնադրությամբ:

5.2. Համալիրի աշխատանքը ղեկավարում է համալիրի տնօրենը, որը և համալիրի վարկերի կարգադրիչն է: Համալիրի տնօրենը ընտրվում է աշխատող-

ների, ծնողների, աշակերտների և համալիրի գործունեությանը աջակից կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների ընդհանուր ժողովում, 5 տարի ժամկետով: Ընտրությունների արդյունքները հաստատվում են ՀՀ ԿԳՄՍ ժողկոմության մինիստրի կողմից:

5.3. Համալիրի մանկավարժական կադրերը ընտրվում են մրցութային կարգով: Մրցույթի անցկացման ժամկետները և կարգը որոշում է համալիրի խորհուրդը: Մանկավարժական կադրերի նշանակումը և ազատումը կատարվում է համալիրի տնօրենի հրամանով:

5.4. Համալիրի կառուցվածքային միավորների գործունեությունը ղեկավարում են այդ միավորների ղեկավարները՝ համալիրի փոխտնօրենի իրավունքներով: Կառուցվածքային միավորների ղեկավարները ընտրվում են համալիրի խորհրդի կողմից 2 տարի ժամկետով: Մրցույթի անցկացման ժամկետն ու կարգը թահմանվում է համալիրի խորհրդի կողմից:Համալիրի կառուցվածքային միավորի ղեկավարների նշանակումն ու ազատումը կատարվում է համալիրի տնօրենի հրամանով:

5.5. Համալիրի կառուցվածքային միավորների ղեկավարների տեղակալները նշանակվում են և ազատվում աշխատանքից համալիրի տնօրենի կողմից:

5.6. Համալիրի և նրա կառուցվածքային միավորների ուսումնաօժանդակ և վարչատնտեսական կազմը նշանակվում և ազատվում է աշխատանքից կառուցվածքային միավորների ղեկավարների ներկայացմամբ՝ համալիրի տնօրենի կողմից:

5.7. Համալիրի, նրա կառուցվածքային միավորների ապասարկող անձնակազմը նշանակվում և ազատվում է աշխատանքից վարչա-տնտեսական աշխատանքների գծով համալիրի փոխտնօրենի կողմից, կառուցվածքային միավորների ղեկավարների ներկայացմամբ:

5.8. Ամբիոնների քանակը, նոր ամբիոնի ստեղծումը, ամբիոնի լուծարքի ենթարկումը կամ ամբիոնների միավորման հարցերը տնօրինում է համալիրի տնօրենը: Ամբիոնի վարիչը ընտրվում և ազատվում է համալիրի խորհրդի կողմից՝ ամբիոնի աշխատակիցների կամ համալիրի տնօրենի առաջադրմամբ: Ամբիոնի վարիչի ընտրության կարգը, ամբիոնի գործունեությունը որոշվում է համաձայն համալիրի խորհրդի կողմից հաստատված դրույթի:

6. ՀԱՄԱԼԻՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Համալիրի, նրա կառուցվածքային միավորների հաստիքացուցակը հաս-

տատվում է ՀԽՍՀ ժողկրթության մինիստրի կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարում, համալիրի տնօրենի ներկայացմամբ:

6.2. Համալիրի, նրա կառուցվածքային միավորների ղեկավար և մանկավարժական աշխատողների, վարչատնտեսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի հաստիքները որոշվում են առանձին-առանձին կառուցվածքային միավորների համար գործող նորմատիվների և տիպային հաստիքներին համապատասխան անհրաժեշտ փոփոխություններով:

Համալիրի տնօրենի, գլխավոր հաշվապահի և համալիրի փոխտնօրենների համար ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության կողմից նշանակվում են անհատական պաշտոնական դրույքներ:

6.3. Համալիրի համար կազմվում են տարեկան ծախսերի նախահաշիվներ՝ սահմանված կարգով հաստատված՝ առանձին-առանձին համալիրի կառուցվածքային միավորների համար՝ սահմանված նորմատիվներին համապատասխան:

6.4. Համալիրի, նրա կառուցվածքային միավորների ֆինանսավորումը կատարվում է կառուցվածքային միավորների տարեկան ծախսերի նախահաշիվներին համապատասխան, բյուջեի հաշվին, ինչպես նաև արտադրական բազայի օգուտների հաշվին:

6.5. Համալիրի ծախսերի նախահաշիվների հաշվապահական հաշվառումը իրականացնում է կրթօջախի հաշվապահությունը:

6.6. Համալիրը սահմանված կարգով ֆինանսական և այլ տեսակի հաշվետվություն է ներկայացնում ժողկրթության մինիստրությանը:

6.7. Համալիրը և նրա կառուցվածքային միավորները օգտվում են իրավական անձի իրավունքներից, ունեն իրենց անվանումը, սահմանված նմուշի կնիք:

7. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՕՋԱԽԻՆ ՏՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

7.1. Սույն կանոնադրության մեջ արվելիք բոլոր շտկումները և ավելացումները կարող են կատարվել միայն համալիրի խորհրդի համաձայնությամբ:

7.2. Համալիրը կարող է լուծարքի ենթարկել ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության կողմից, համալիրի ստեղծմանից հաշված, 5 տարուց ոչ շուտ: